

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորանքի խոսքը Արցախի
Հանրապետության տոնի առթիվ

02.09.2019թ

Սիրելի հայրենակիցներ

1991 թվականի սեպտեմբերի 2-ին հռչակվեց Արցախի անկախ
հանրապետությունը, որով դրվեց ին հայկական երկրորդ պետության հիմքերը:
Այդ կամարտահայտումը, սակայն, հարկ եղավ պաշտպանել ռազմադաշտերում,
տասնյակ հազարավոր հայորդիների կյանքի ու արյան գնով: Իսկ դրան
հաջորդած տարիները ցույց տվեցին մեր հաղթանակների անշրջելիությունը,
համայն հայության անսասան կամքը՝ ազատ, ինքնիշխան Արցախի
պաշտպանության ու հզորացման գործում:

Շնորհավորում եմ բոլորիս Արցախի անկախության տոնի առթիվ, մաղթում
խաղաղ ու հզոր հայրենիք, համազգային նոր հաղթանակներ:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան